

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Ս. Ա. ՇՏԻԿՅԱՆ

Արեմտահայ նշանավոր գրական-հասարակական գործիչ, հրապարակախոս Ստեփան Ոսկանյանի կյանքի ամենասկզբնական ժամանակաշրջանը (1825—1846 թթ.) անբավարար է լուսաբանված: Պարբերաբար, գրեթե նույն ձևով ասվել-կրկնվել է ընդամենը երկու նախադասություն. «Ստեփան Ոսկանյանը ծնվել է 1825 թվականին Զմյուռնիայում, չքավոր արհեստավորի ընտանիքում: Մանուկ հասակից զրկվելով հորից, հարուստ ազգականների նյութական օժանդակությամբ ավարտեց Մեսրոպյան վարժարանը և ապա, ուսուցչի պաշտոն ստանձնեց հենց այդ նույն վարժարանում»¹: Մինչդեռ երևան են հանված նոր և հետաքրքրական բազմաթիվ փաստեր, որոնք նոր լույս են սփռում Ոսկանյանի կենսագրության և գրական գործունեության այս շրջանի վրա:

Առաջին անգամ Ստեփան Ոսկանյանի անունը մեր պարբերականներում երևում է 1843 թ., երբ նա 18 տարեկան էր: Այդ թվականի հունվարի 1-ին, Զմյուռնիայում հրատարակվող «Արշալույս Արարատյան» շաբաթաթերթը ֆրանսերեն բնագրից կատարված արեմտահայերեն կոկիկ թարգմանությամբ հրատարակում է «Կիրակի օր անգղիացի պատերազմական նավի մր մեջ» պատմվածքը, մեզ համար կարևոր՝ «թարգմանեացի գաղղիական Ստեփան Ոսկանյան, յաշակերտաց վարժարանիս» ստորագրությամբ: Ենթադրել, որ Ոսկանյանը տպագրվել է նաև մինչ այդ, այսինքն՝ մինչև 1843 թվականը, թվում է անհավանական: Շաբաթաթերթի խմբագիր Ղուկաս Պալզազարյանը, որը դրական վերաբերմունք ուներ դեպի Ոսկանյանը², անշուշտ, սիրով այլև-այլ բնույթի ուրիշ գործեր էլ կհրատարակեր նրանից, եթե վերջինս մինչև 1843 թ. հրատարակելու որևէ բան ներկայացրած լիներ:

Այսպես ուրեմն, 1843 թ. հունվարին, Ստեփան Ոսկանյանը, դեռևս Մեսրոպյան վարժարանի աշակերտ էր: Բայց հայտնի է նաև, որ Մեսրոպյան վարժարանը, գոնե Ոսկանյանի ուսումնառության տարիներին, աշակերտներն ավարտում էին հենց 18 տարեկան հասակում: Գիտենք նաև, որ Ղուկաս Պալզազարյանը, աշակերտների թարգմանությունները իր շաբաթաթերթում հրատարակելիս, որպես կանոն, վերցնում էր ավարտական գասարանցիների գործերը: Մնում է գալ այն եզրակացությանը, որ Ոսկանյանը 1843 թ. սկզբներին

¹ «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 3, Երևան, 1962, էջ 96:

² Հայտնի է, որ երբ Ոսկանյանը 1846 թ. մեկնեց Փարիզ, «Սենտ-Բարպ» վարժարանում սովորելու, նա վարժարանի տնօրեն Ալեքսանդր Լաբրուստին ներկայացավ, ունենալով Պալզազարյանի նամակ-հանձնարարականը:

պետք է որ ավարտած լինեն Մեսրոպյան վարժարանը³։ Եվ այդպես էլ է։ Նույն թվականի հունվարի 29-ին, «Արշալույս Արարատյանը» դարձյալ ֆրանսերենից կատարված թարգմանությամբ, հրատարակում է «Զինացոց թաղման արարողությունը» հոդվածը, որը վերջում ունի «Թարգմանեաց ի գաղղիականն Ստեփան Ոսկանեան» նշումը։ Ուշագրավը և մեզ հետաքրքրողն այստեղ այն է, որ չկա «Աշակերտ Մեսրոպյան վարժարանի» կամ այս բնույթի որևէ նշում։ Եզրակացությունը բխում է ինքն իրեն՝ որ 1843 թ. հունվարին Ոսկանյանը ավարտել էր Մեսրոպյան վարժարանը։

Կենսագրական բնույթի այս կարևոր ճշգրտումը օգնում է մեզ մի այլ՝ ոչ պակաս կարևոր ճշտում էլ անելու։ Մեսրոպյան վարժարանը, ոչ միայն այն տարիներին, որ սովորում էր Ստեփան Ոսկանյանը, այլև դրանից հետո էլ, ութամյա դպրոց էր։ Բնականաբար՝ քանի որ Ոսկանյանն ավարտել էր 1843 թ. և սովորել էր ութ տարի, ուրեմն նա վարժարան էր ընդունվել 1835 թ., ընդունված կարգի համաձայն՝ աշնանը⁴։

Այստեղ անհրաժեշտ է մի փոքրիկ բացատրություն տալ, որպեսզի հասկանալի լինի Ոսկանյանի կյանքի հաջորդ շրջանը։ Մեսրոպյան վարժարանի այն շրջանավարտները, որոնք առանձնապես աչքի էին ընկել այս կամ այն առարկայի ուսումնասիրության ընթացքում, տվյալ առարկայի գծով, պահվում էին վարժարանում, որպես ուսուցիչներ։ Դրա համար նրանք, լրացուցիչ գումար վճարելով, կցվում էին այն ուսուցչին, որի մոտ անհրաժեշտ էր մի որոշ ժամանակ էլ «կատարելագործվել», և միաժամանակ, այդ ուսուցչի հսկողության ներքո և նրա օժանդակությամբ համեմատաբար ցածր դասարաններում դասեր էին տալիս։ Այդպիսիները, շնայած պաշտոնական գրագրության մեջ կոչվում էին «օգնական վարժապետներ» կամ «ուսուցիչներ», բայց հաճախ էլ որակվում էին նաև նախկին ձևով, այսինքն՝ «աշակերտ»։ Վերջին որակումը, փոքր ինչ անսովոր թվալով հանդերձ, ճիշտ էր բացահայտում երևույթի էությունը, որովհետև այդպիսի նորաթուխ «օգնական վարժապետները» ի վերջո՝ շարունակում էին աշակերտել այն ուսուցչին, որին իրենք կցված էին⁵։

Այս նույն ճակատագիրն էլ վիճակվում է Ստեփան Ոսկանյանին։ Ավարտելով վարժարանը 1843 թ. հունվարին, նա փետրվարից աշխատանքի է անցնում նույն դպրոցում, որպես «օգնական վարժապետ», շարունակելով, միաժամանակ, համարվել դպրոցի աշակերտը, որովհետև կցված էր բարձր դասարանների հետ պարապող ուսուցչին։ Սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ ընդհուպ մինչև 1846 թ. վերջը, այսինքն՝ մինչև Փարիզ ուղևորվելը, Ոսկանյանի հրատարակած գործերի մեծ մասն ունեն «աշակերտ Մեսրոպյան վարժարանի» կամ՝ «յաշակերտաց Մեսրոպյան վարժարանի» նշումը, և այս

3 Մեսրոպյան վարժարանը. ի տարբերություն արևմտահայ մյուս դպրոցների, աշակերտներն ավարտում էին ձմռանը։

4 Մեսրոպյան վարժարանի մասին տես. «Հայտարարություն կանոնաց Ս. Մեսրոպյան ազգային վարժարանին որ ի Զմյուռնիա». Զմյուռնիա, 1858, Ս. Փ ա փ ա զ յ ա ն, Կենսագրություն Ռուբեն Անդրեաս Փափազյան բազմարդյուն վարժապետի..., Պոլիս, 1858։

5 Որպես օրինակ բերենք Ստեփան Սարգսյանի մահախոսականը, Ստեփան Սարգսյանի, որը 1852 թ. ավարտելով Մեսրոպյան վարժարանը, մի տարի որպես ուսուցիչ աշխատելուց հետո մահացել էր. «Աս ուսումնական երիտասարդը,— կարդում ենք մահագրության մեջ,— որ Մեսրոպյան վարժարանին ընտիր աշակերտներեն մեկը և միանգամայն (իմա. նաև. Ս. Շ.) գեղեցկագրության և թվարանության ուսուցիչ էր, երկարատև հիվանդութենն մ' ետև իր 19 տարեկան հասակին մեջ...», «Արփի Արարատյան», 1854 թ., № 3։

այն դեպքում, երբ նա, ինչպես արդեն ասացինք, վաղուց արդեն աշակերտ էր:

Ի՞նչ էր ավանդում Ոսկանյանը: Այս հարցին պատասխանել մեզ օգնում է 1843 թ. փետրվարին «Արշալույս Արարատյանում» (№ 125) հրատարակված «Ս. Մեսրոպյան վարժարանի աշակերտներուն տարեկան հարցաքննությունը» խորագիրը կրող ընդարձակ հոդվածը, ուր նշված է այդ տարվա բոլոր շրջանավարտների անուն-ազգանունները և որ առարկաների գծով աչքի ընկնելը: Ստեփան Ոսկանյանը փայլել է «Գաղղիարեն» լեզու» առարկայի գծով: Եթե սրան էլ ավելացնենք, որ նա մամուլում արդեն հանգես էր եկել ֆրանսերենից կատարված թարգմանություններով, որ նույնպես ապացույց էր նրա ֆրանսագիտության, ապա կարելի կլինի պնդել, որ վարժարանի ոչ վաղուցվա շրջանավարտը նույն այդ վարժարանում պետք է վարեր ֆրանսերեն լեզվի օգնական ուսուցչի պարտականությունները:

Իհարկե, աշխատելու հետ մեկտեղ, Ոսկանյանը շարունակում էր դբաղվել գրական-թարգմանչական գործունեությամբ: Նույն 1843 թ. ապրիլին «Արշալույս Արարատյանը» (№ 135) հրատարակում է «Արտառուց պատմություն մը» գողտրիկ պատմվածքը. որը վերջում ունի «Թարգմանեաց ի գաղղիականի Ստեփան Ոսկանյան, յաշակերտաց վարժարանիս»: Նշումը: Առայժմ պարզված է պատմվածքի հեղինակը:

Ստեփան Ոսկանյանին նորից հանդիպում ենք մոտ տասնամյա հետո և այս հանդիպումը արդեն վճռական նշանակություն ունի նրա գրչին պատկանող նորանոր գործերի բացահայտման խնդրում: 1844 թ. հունվարին (24—31-ը) Մեսրոպյան վարժարանը կատարում է իր հերթական՝ տարեկան քննության հարցաքննությունն ու պարգևատրության հանդեսը: Տալով այդ հանդեսի նկարագրությունը, թվարկելով մասնակիցներին, աչքի ընկած աշակերտներին և այլն, «Արշալույս Արարատյանը» (№ 176) ավելացնում է. «Վարձատրության հանդեսին սկիզբը, սուրբ Մեսրոպյան դպրոցին երևելի վարժապետներեն, պատվելի պարոն Ռուբեն Անդրեասը Փափազյան հետևյալ ճառը կարդաց: Անկե ետքը, դպրատան առաջադեմ աշակերտներեն ուսումնական պարոն Հակ Ստեփանը Ոսկանյան, ի նվեր Սյունյաց ընկերությանը ոտանավոր մը կարդաց: որն որ նմանապես հրատարակելու արժան համարեցանք»:

Որ հիշյալ Հակ Ստեփան Ոսկանյանը մեզ հետաքրքրող Ստեփան Ոսկանյանն է,— այդ մասին տարակույս չի կարող: Բավական է հիշատակել, որ 1859 թ. Փարիզում հրատարակվող իր «Արևմուտք» հանդեսի վերջում՝ նույնպես Ոսկանյան ստորագրում էր, «Խմբագիր-տնօրեն Հ. Ս. Ոսկանյան», որ Հակ Ստեփան Ոսկանյանի կրճատված ձևն է: Այս ճշգրտումը, մեզ համար ամենևին էլ երկրորդական չէ այն պատճառով, որովհետև, ինչպես հետո կտեսնենք, 1844 թ. սկսած, իրար են հաջորդում մի ամբողջ շարք ինքնուրույն և թարգմանական հոդվածներ, չափածո և արձակ ստեղծագործություններ, և նույնիսկ մի պոեմ, որոնք ունեն «Հակ Ս. Ոսկանյան», «Հ. Ս. Ոսկանյան», «Հ. Ս.» «Հ. Ս. Ո.» ստորագրությունները, դրանք վրիպել են ուսումնասիրողների ուշադրությունից: Մի հանգամանք, որը, կարիք չկա թերևս ասելու, աղարտում է հեղինակի գրական-ստեղծագործական գիմանկարը:

Սյունյաց ընկերությանը նվիրված Ոսկանյանի ստեղծագործությունը գրված անսեթևեթ ու հստակ գրաբարով, ուր հեղինակը ներբողականներին բնորոշ հանդիսավորությամբ դրվատում է վերոհիշյալ ընկերության ազգօգուտ և

աղգասեր գործունեությունը: Բանաստեղծությունը մեզ համար ուշագույս է նախ այն պատճառով, որովհետև հանդիսանում է առաջին շափածո խոսքը «Արշալույս Արարատյանում», նրա նախորդ ամբողջ 175 համարներում, այսինքն՝ շաբաթաթերթի գոյության սկզբից: Եվ երկրորդ՝ այդ բանաստեղծությունը Ստեփան Ոսկանյանի առաջին ինքնուրույն ստեղծագործությունն է, և որպես այդպիսին, անշուշտ, արժանի է ուշադրության:

Մոտ երկու ամիս անց, Մեսրոպյան վարժարանի ֆրանսերեն լեզվի ուսուցիչը նորից է երևում «Արշալույս Արարատյանի» էջերում: 1844 թ. ապրիլի 22-ի համարում «Արշալույս Արարատյանը» (№ 187) հրատարակում է «Վասն զեռնոց, որ ղմի և եթ օր կեան...» հոգվածը, որն ունի «Թարգմանեաց ի գաղղիականէ Հայկ Ս. Ոսկանեան» նշումը: Հոգվածը, նախորդի պես, թարգմանված է գրաբարով, և մինչև 1846 թ., այսինքն մինչև Փարիզ ուսումնառությանն ենթակելը, «Արշալույս Արարատյանում» հրատարակված Ստեփան Ոսկանյանի բոլոր գործերը կամ ղրված են գրաբար, կամ թարգմանված են գրաբարով: Այն Ստեփան Ոսկանյանի, որը հետագայում պետք է դառնար գրաբարի կատարիչ հակառակորդը:

Այնուհետև, նույն 1844 թ. ընթացքում իրար են հաջորդում «Աղբատ գինեղէն» բանաստեղծության գրաբար թարգմանությունը (ունի «Թարգմանեաց ի գաղղիականէ Հայկ Ս. Ոսկանեան» նշումը. «Արշալույս Արարատյան», 1844 թ. հուլիսի 15, № 199), «Տրամաբանութիւն բարոյական» ծավալուն հոգվածը գրաբար թարգմանությամբ (ունի «Ի գաղղիականէ թարգ. Հայկ Ս. Ոսկանեան, յաշակերտաց վարժարանին» նշումը. Անդ, հուլիսի 22, № 200) և վերջապես՝ Լաֆոնտենի «Ճպուռն ու մրջին» առակը թարգմանված գրաբարով (ունի «Թարգմանեաց Հ. Ս. Ոսկանեան» նշումը. Անդ, օգոստոսի 12, № 204), ի դեպ՝ հայկական իրականության մեջ Լաֆոնտենի թարգմանության առաջին փորձը: Դժվար չէ նկատել, որ 1844 թ. բավականին բեղմնավոր տարի է եղել Մեսրոպյան վարժարանի ֆրանսերեն լեզվի օգնական ուսուցչի համար, որը դասերով ծանրաբեռնված լինելով հանդերձ, կտրողացել է մեկից ավելի թվով դորժեր հրատարակել «Արշալույս Արարատյանում»:

Ոչ պակաս բեղմնավոր է սկսում իր գործունեությունը Ոսկանյանը հաջորդ՝ 1845 թ.: Միայն մեկ՝ փետրվար ամսվա ընթացքում նա հանդես է գալիս երկու անգամ և երեք անուն գործերով: Սրանցից առաջինը՝ Լաֆոնտենի «Գորտն որ ջանա գլել զեղն մեծութեամբ» առակի ֆրանսերենից կատարված գրաբար թարգմանությունն է (ունի «Թարգ. Հ. Ս. Ո.» նշումը. «Արշալույս Արարատյան», 1845 թ. փետրվարի 10, № 226), որն ի դեպ, Ոսկանյանի թարգմանությունների մեջ լավագույններից մեկը կարող է համարվել: Շաբաթաթերթի՝ անմիջապես հաջորդ համարում, Ոսկանյանը հրատարակում է իր «Առ քաջն Վարդան» գրաբար արձակ բանաստեղծությունը և «Թարեկեցիկ աուրք» պոեմը (ունի «Հայկ Ս. Ոսկանեան, աշակերտ Մեսրոպյանի դպրոցին» նշումը. Անդ, փետրվարի 24, № 227): Երկու ստեղծագործություններն էլ, որպես այդպիսիք, եզակի երևույթ էին Ոսկանյանի գրական կյանքում, և ոչ պակաս հետաքրքրական երևույթ էին արդեն ձևավորվել սկսվող հայ նոր գրականության անդամ տանում: Եվ հավանորեն այդ նույն արդյունավետությամբ էլ նա կշարունակեր հանդես գալ «Արշալույս Արարատյանում», եթե ծայր առած ձախորդ եղելությունները չընթերին ղեկավարի ընթացքը:

Ամփոփենք, Ոսկանյանը 1835 թ. աշնանը ընդունվում է Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանը, որը ավարտում է 1843 թ. հունվարին: 1843 թ. փետրվարից մինչև 1845 թ. հուլիսը, մոտ երկուս ու կես տարի, նա ֆրանսիերեն է դասավանդում նույն վարժարանում, վարելով օգնական ուսուցչի պարտականությունները: Հիմնականում այս ժամանակաշրջանում էլ նա սկսում է հանդես գալ Զմյուռնիայի «Արշալույս Արարատյանում», հրատարակելով ինքնուրույն ու թարգմանական տասնմեկ անուն գործ, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում և որոնց մասին ավելի ուշ կհամարվի ավելի:

ПО СЛЕДАМ ЛИТЕРАТУРНОГО НАСЛЕДИЯ СТ. ВОСКАНИЯНА

С. А. ШТИКЯН

Р е з ю м е

В статье исследуется первоначальный этап жизни и литературной деятельности армянского публициста и писателя Степана Восканяна. Доказывается, что в эти годы, т. е. с начала 1843 г. до середины 1846 г. он написал или перевел (с французского) одиннадцать художественных произведений (стихотворения, басни, новеллы и т. д.), которые были подписаны разными псевдонимами, и, следовательно, не включались в литературное наследие Восканяна.